21.qxd 22/10/2026 19:53 Page 1

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 20 հոկտեմբերի 2026թ. թիվ 21(649)

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՆՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Գեղարքունիքի մարզի եւ Ֆրանսիայի Իզերի դեպարտամենտի ապակենտրոնացված համագործակցության շրջանակում մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունել է ֆրանսիացի գործընկերներին՝ Ժակլին Ռեբուֆեին եւ Մարի-Պիեռ Կուալիեին՝ Օվերն-Ռոն-Ալպ ռեգիոնի Գյուղատնտեսական պալատից, ինչպես նաեւ Միշել Պագուսյանին եւ Սյուզան Սենլարին՝ Ֆրանսիայի հայկական հիմնադրամից:

Հանդիպման ընթացքում խոսվել է գյուղատնտեսության ոլորտում համագործակցության շրջանակում իրականացվող աշխատանքների, արդեն իսկ ունեցած փորձի եւ նոր ծրագրերի հնարավորությունների մասին: Առանձնահատուկ անդրադարձ է կատարվել ֆրանսիական հաջողված փորձը Գեղարքունիքի մարզում կիրառելու եւ տեղական պայմաններին համապատասխան ծրագրեր ներդնելու հնարավորություններին:

Մարզպետը վստահություն է հայտնել, որ նման համագործակցությունը հնարավորություն է տալիս նոր գիտելիքներ ու փորձ ներգրավել մարզ, զարգացնել գյուղատնտեսությունը եւ ստեղծել ավելի լավ հնարավորություններ ֆերմերային տնտեսությունների համար:

Ս ԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ԱՐԱՀԵՏ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում բացվել է «Երազանք» անունը կրող հեծանվային արահետ:

Բացման արարողությանը մասնակցել են Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Սեւանի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Արմենուհի Ղուկասյանը, համայնքապետարանի աշխատակիցներ, հեծանվասեր պատանիներ, դպրոցականներ եւ մեծահասակներ: Արահետը ձգվում է 6 կիլոմետր երկարությամբ՝ լի արկածներով, գեղեցիկ տեսարաններով ու դրական էներգիայով:

Օրվա ամենասպասված իրադարձություններից է եղել հեծանվարշավը, որը մեկնարկել է «Երազանք» այգուց եւ պարեկների ուղեկցությամբ հասել մինչեւ «Երազանքի արահետ»: Մասնակիցները հաղթահարել են վերելքները, վայելել Սեւանի հիասքանչ բնապատկերները:

Արահետը կահավորված է ուղղորդող ցուցանակներով, որոնք օգնում են հեծանվորդներին՝ հեշտությամբ կողմնորոշվել, ինչպես նաեւ ներկայացնում են հետաքրքիր տեղեկություններ Սեւանի մասին՝ դառնալով յուրօրինակ ուղեցույց քաղաքի հյուրերի եւ զբոսաշրջիկների համար: Տեղադրվել են նաեւ հեծանվային հատուկ կանգառներ:

Հեծանվային մշակույթի ձեւավորման եւ համայնքում նախաձեռնության իրականացման գործում ներդրում ունենալու համար «Սեւան երիտասարդական ակումբ» ՀԿ նախագահ Գոհար Մնացականյանը հուշանվերներ է հանձնել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանին, Սեւանի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Արմենուհի Ղուկասյանին, աշխատակազմի ԿՄՍԵ հարցերի բաժնի պետ Նարինե Հարությունյանին, հեծանվային սպորտի մարզիչ Արմեն Երիցյանին եւ «SevanVELOtime» նախաձեռնության ղեկավար Հերմինե Անդրիկյանին:

Ծրագիրն իրականացվել է «Սեւան երիտասարդական ակումբ» ՀԿ-ի կողմից՝ «The Stirling Foundation»-ի աջակցությամբ: Ծրագրում իր ներդրումն է ունեցել նաեւ Սեւան համայնքը:

ԳԱՎԱՌԻ «ԱՌՎՈՒՅՏԻ ԴԱՇՏԻ» ԱՄՐՈՑԸ ԵՎ ԲՆԱԿԱՏԵՂԻՆ

Գավառ քաղաքի տարածքը շրջապատող հնագույն ամրոց-բնակավայրերից մեկն էլ Առվույտի դաշտի ամրոց-բնակատեղին է, որը ուշ միջնադարում կրել է «Յոնջալուխ» օտարահունչ անունը:

«Առվույտի դաշտի» ամրոցն ու բնակատեղին տարածվում են Գավառ քաղաքից 5-6 կիլոմետր դեպի արեւմուտք, «Գյոզեի կուչ» կոչվող քարափի բարձունքին: Ամրոցը եւ շրջակայքի դամբարանադաշտերը թվագրվում են Քրիստոսից առաջ 2-1 հազարամյակով, բնակատեղիի, եկեղեցու ավերակները եւ խաչքարերը՝ 9-17-րդ դարերով:

«Առվույտի դաշտի» ամրոցի մասին առաջին անգամ համեմատաբար մանրակրկիտ տեղեկություն է հաղորդում անվանի հնագետ Գեդեոն Միքայելյանը. «Չանդոյի բերդից 1-2 կիլոմետր դեպի հարավ-արեւելք մի գոգավոր, լայնատարած հարթություն է ձգվում՝ Առվույտի դաշտ կամ Յոնջալուխ անունով: Այդ դաշտն ունի ավելի քան 500 հեկտար մակերես՝ շրջակա բարձրադիր բլրաշարքերով, որոնք փարթամ արոտավայրեր են: Դաշտի հյուսիսարեւելյան մասում կա ցածրանիստ քառանկյունի, համարյա հարթ գագաթով մի բլուր՝ կես հեկտարից պակաս մակերեսով: Բարձունքի վրա կառուցված է միջնաբերդ՝ շրջապատված անընդմեջ բնակարաններով: Միջնաբերդի ներսում երեւում են կացարանների ավերակների հետքեր, իսկ կենտրոնում նկատելի է քառակուսի աշտարակի հիմք: Հավանաբար, այս միջնաբերդն ունեցել է երկու, գուցե եւ երեք շինարարական շրջան:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գեղարքունիք գյուղը գտնվում է Գավառ քաղաքից 9 կիլոմետր դեպի հարավ, Գեղամա լեռնաշքաթի հյուսիսարեւելյան փեշին, ծովի մակարդակից 2040-2160 մետր բարձրության վրա, արեւելյան ու արեւմտյան կողմերում բարձրացող լեռնալանջերի միջեւ տարածվող ձորի մեջ:

Գյուղը հարուստ է պատմության ու մշակույթի հուշարձաններով, որոնց մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Սուրբ Գեւորգ եկեղեցին:

Գեղարքունիք գյուղի պատմության հուշարձաններից հայտնի են նաեւ Քրիստոսից առաջ 1-ին հազարամյակով թվագրվող կիկլոպյան ամրոցը, Ք.ա 2-րդ հազարամյակով թվագրվող «Չոր ավերակներ» ու «Մանուչարի լիճ» բնակատեղիները, երեք խոշոր դամբարանադաշտեր, Սուրբ Գեւորգ, Սուրբ Հակոբ, Սուրբ Ստեփանոս մատուռները, հնագույն ջրանցքն ու մի քանի ջրամբարները, մի քանի միջնադարյան գերեզմանոցները:

Գեղարքունիք գյուղը շատ մոտ է գտնվում Իլիկավանքի կիկլոպյան մեծ ամրոցին ու տարածվող հսկայական շենին, ինչը փաստում է, որ այս բնակավայրն էլ հիմնվել է անհիշելի ժամանակներից ու շարունակվել հազարամյակներ՝ կրելով քաղաքակրթական տարբեր ու հարուստ մշակութային շերտեր:

Գեղարքունիք գյուղում է բնակվում քարագործ վարպետ, շինարար, քանդակագործ, հնասեր Լեւիկ Ղազարյանը, որին բոլորը ճանաչում են Վարպետ Գրետ անունով, առանձնակի սիրով ու ոգեւորությամբ է ներկայացնում հայրենի գյուղի ամեն մի անկյունը, քարն ու թուփը, մարդկանց, պատմությունը, պատմամշակութային հուշարձանները, որոնց մասին անգամ ծներգեր ու բանաստեղծություններ է գրել: Հենց նրա ձեռքերով է կենդանություն ստացել Գեղարքունիք գյուղի Սուրբ Հակոբ մատուռը, որը դեռ մի քանի տասնամյակ առաջ ոչ միայն գտնվել է ավերակ, այլ շատերի համար գրեթե անհայտ վիճակում:

/շարունակությունը՝ էջ 5-ում/

21.qxd 22/10/2026 19:53 Page 2

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՐԵԼ Է 461 ՄԻԼԻՈՆ 414 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

ՀՀ կառավարության 2026 թվականի հոկտեմբերի 15-ի հերթական նիստում որոշում է կայացվել՝ Գեղարքունիքի մարզում իրականացված սուբվենցիոն 11 ծրագրերի համար 461 միլիոն 414 հազար դրամ հատկացնելու մասին:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, 243 միլիոն 512.7 հազար դրամ հատկացվել է Սեւան քաղաքի Բարեկամության, Խաղաղության, Կոմիտասի, Աշոտ Երկաթի, Ելենովկա եւ Բաբաջանյան փողոցների հիմնանորոգման աշխատանքների համար: Այս պահի դրությամբ կատարվել է աշխատանքների շուրջ 95 տոկոսը, որի արդյունքում ասֆալտապատվել է 2600 գծամետր ճանապարհ:

12 միլիոն 256.6 հազար դրամ հատկացվել է Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի լուսավորության համակարգերի կառուցման համար: Կատարվել է աշխատանքների շուրջ 90 տոկոսը, որի արդյունքում անցկացվել է 3,5 կիլոմետր երկարության լուսավորության համակարգ:

47 միլիոն 136,3 հազար դրամ հատկացվել է Գավառ քաղաքի Կենտրոնական հրապարակի տարածքում ժամանակակից կիներդահլիճի կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

29 միլիոն 700,9 հազար դրամ հատկացվել է Ճամբարակ համայնքում սպորտային այգու կառուցման աշխատանքների իրականացման համար:

40 միլիոն 805,9 հազար դրամ հատկացվել է Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի մշակույթի տան երրորդ հարկի վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

26 միլիոն դրամ՝ Մարտունի համայնքի 5 բնակավայրերում անօդաչու թռչող սարքերի (դրոնների) լաբարատոր սենյակների վերանորոգման եւ ժամանակակից սարքավորումներով կահավորման աշխատանքների իրականացման համար:

10 միլիոն 124,6 հազար դրամ հատկացվել է Սեւան համայնքի Գեղամավան բնակավայրի մարզասրահի վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

9 միլիոն 200 հազար դրամ հատկացվել է Սեւան համայնքի Դմաշեն բնակավայրում տրանսպորտային կանգառների տաղավարների եւ նստարանների տեղադրման աշխատանքների իրականացման համար:

10 միլիոն 300 հազար դրամ հատկացվել է Սեւան համայնքի Ծաղկունք բնակավայրի մանկապարտեզի չգործող մասնաշենքի վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

10 միլիոն 200 հազար դրամ հատկացվել է Սեւան համայնքի Վարսեր բնակավայրում մինի ֆուտբոլի-բասկետբոլի դաշտի կառուցման աշխատանքների իրականացման համար:

31 միլիոն 377,4 հազար դրամ հատկացվել է Վարդենիս քաղաքի Բանավան թաղամասում այգու կառուցման աշխատանքների իրականացման համար:

ՍԵՎԱՆԻ ԵՐԱԺՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱԿՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԵԼ ՈՒ ԲԱՑՎԵԼ Է ՎԱԼԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԱՐԹԱՔԱՆԴԱԿԸ

Սեւանի երաժշտական դպրոցում տեղի է ունեցել անվանի կոմպոզիտոր, մանկավարժ Վալերի Սարգսյանի հարթաքանդակի բացման հադիսավոր արարողությունը:

Միջոցառմանը մասնակցել են մշակույթի գործիչներ, Սեւան համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Համբարձումյանը, համայնքապետարանի ներկայացուցիչներ, կոմպոզիտորի հարազատներն ու արվեստասեր սեւանցիներ:

Ներկաներն իրենց երախտագիտության խոսքն ուղղել են հարթաքանդակի հեղինակ Արտաշես Սարգսյանին, ինչպես նաեւ նախաձեռնության իրականացմանն աջակցած անձանց եւ այն կյանքի կոչած կոմպոզիտորի կնոջը՝ Կարինե Սարգսյանին, եւ որդուն՝ Դավիթ Սարգսյանին:

Վալերի Սարգսյանը շուրջ 20 տարի ղեկավարել է Սեւանի երաժշտական դպրոցը: 2015 թվականին Սեւան համայնքի ավագանու որոշմամբ դպրոցը կոչվել է նրա անունով՝ արժեւորելով նրա մեծ ներդրումը համայնքի երաժշտական կյանքի եւ երիտասարդ սերնդի կրթության գործում:

Այսուհետ երաժշտական դպրոցի մուտքը կզարդարի մեծանուն կոմպոզիտորի հարթաքանդակը՝ ամեն օր հիշեցնելով նրա անցած ստեղծագործական ուղու, մանկավարժական վաստակի եւ սերունդներին թողած անգնահատելի ժառանգության մասին:

Մեծ արվեստագետները հեռանում են կյանքից, բայց նրանց ստեղծած երաժշտությունը, թողած հետքն ու բարի հիշատակը մնում են հավերժ:

Հարթաքանդակի բացումը հարգանքի տուրք էր վաստակաշատ արվեստագետի հիշատակին՝ խորհրդանշելով նրա հարուստ երաժշտական ժառանգության փոխանցումը գալիք սերունդներին:

Արմինե Ղուկասյան

ԱՄՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԸ ԱՅՑԵԼԵԼ Է ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանում ԱՄՆ դեսպանության առաքելության ղեկավարի տեղակալ Էնդրյու Ջոնսոնն այցելել է Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք՝ «Դեմոկրատիան այսօր» ՀԿ նախաձեռնությամբ՝ ԱՄՆ ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) աջակցությամբ իրականացվող «Հակամարտությունից տուժած տարածաշրջաններում քաղաքացիների ներգրավվածության խթանում» ծրագրի շրջանակում:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, այցի ընթացքում Էնդրյու Ջոնսոնը հանդիպել է Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի հետ:

ԱՄՆ դեսպանության առաքելության ղեկավարի տեղակալը նաեւ հանդիպել է Մարտունի համայնքի շուրջ 70 բնակչի հետ՝ հնարավորություն ընձեռելով համայնքի բնակիչներին՝ հարցեր ուղղելու եւ իրենց տեսակետներն արտահայտելու տարածքում ժամանակակից կինոդահլիճի կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

10 միլիոն 300 հազար դրամ հատկացվել է Սեւան համայնքի Ծաղկունք բնակավայրի մանկապարտեզի չգործող մասնաշենքի վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

10 միլիոն 200 հազար դրամ հատկացվել է Սեւան համայնքի Վարսեր բնակավայրում մինի ֆուտբոլի-բասկետբոլի դաշտի կառուցման աշխատանքների իրականացման համար:

31 միլիոն 377,4 հազար դրամ հատկացվել է Վարդենիս քաղաքի Բանավան թաղամասում այգու կառուցման աշխատանքների իրականացման համար:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, այցի ընթացքում էնդրյու Ջոնսոնը հանդիպել է Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի հետ:

ԱՄՆ դեսպանության առաքելության ղեկավարի տեղակալը նաեւ հանդիպել է Մարտունի համայնքի շուրջ 70 բնակչի հետ՝ հնարավորություն ընձեռելով համայնքի բնակիչներին՝ հարցեր ուղղելու եւ իրենց տեսակետներն արտահայտելու տարածքում ժամանակակից կինոդահլիճի կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

29 միլիոն 700,9 հազար դրամ հատկացվել է Ճամբարակ համայնքում սպորտային այգու կառուցման աշխատանքների իրականացման համար:

40 միլիոն 805,9 հազար դրամ հատկացվել է Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի մշակույթի տան երրորդ հարկի վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

26 միլիոն դրամ՝ Մարտունի համայնքի 5 բնակավայրերում անօդաչու թռչող սարքերի (դրոնների) լաբարատոր սենյակների վերանորոգման եւ ժամանակակից սարքավորումներով կահավորման աշխատանքների իրականացման համար:

10 միլիոն 124,6 հազար դրամ հատկացվել է Սեւան համայնքի Գեղամավան բնակավայրի մարզասրահի վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

9 միլիոն 200 հազար դրամ հատկացվել է Սեւան համայնքի Դմաշեն բնակավայրում տրանսպորտային կանգառների տաղավարների եւ նստարանների տեղադրման աշխատանքների իրականացման համար:

10 միլիոն 300 հազար դրամ հատկացվել է Սեւան համայնքի Ծաղկունք բնակավայրի մանկապարտեզի չգործող մասնաշենքի վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

10 միլիոն 200 հազար դրամ հատկացվել է Սեւան համայնքի Վարսեր բնակավայրում մինի ֆուտբոլի-բասկետբոլի դաշտի կառուցման աշխատանքների իրականացման համար:

31 միլիոն 377,4 հազար դրամ հատկացվել է Վարդենիս քաղաքի Բանավան թաղամասում այգու կառուցման աշխատանքների իրականացման համար:

Քննարկման ընթացքում էնդրյու Ջոնսոնը վերահաստատել է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության կարեւորությունը՝ տարածաշրջանում շարունակվող խաղաղության գործընթացի համատեքստում:

Այցը հնարավորություն է ընձեռել համայնքի բնակիչներին՝ անմիջական երկխոսություն ծավալելու միջազգային գործընկերոջ հետ՝ ընդգծելով իրազեկված հանրային քննարկումների, քաղաքացիական մասնակցության եւ համայնքային ներգրավվածության կարեւորությունը Հայաստանի խաղաղության, անվտանգության եւ զարգացման վրա ազդող հարցերի շուրջ:

ԴԴՄԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԹԻՄԸ ՀԱՂԹՈՂ Է ՃԱՆԱՉՎԵԼ ՖՈՒՏԶԱԼԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՄ

ՀՀ մարզերի եւ Երեւան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների «Սպարտակիադա» մարզական միջոցառման շրջանակում Գեղարքունիքի մարզի դպրոցականների միջեւ անցկացվել են ֆուտզալի մարզային մրցումներ, որում հաղթող է ճանաչվել Սեւան համայնքի Դմաշենի միջնակարգ դպրոցի թիմը: Ֆուտզալ մարզաձեւի մրցումներին մասնակցել են ուսումնական հաստատությունների 10-12-րդ դասարանների սովորողները:

Ֆուտզալի Գեղարքունիքի մարզային մրցումները մեկնարկել են 2026 թվականի հոկտեմբերի 15-ին: Այն անցկացվել է Գավառի Գրիշա Վահանի Ափրոյանի անվան մարզադպրոցում:

Մարզային փուլին մասնակցել են Գավառի, Մարտունու, Սեւանի, Վարդենիսի եւ Ճամբարակի համայնքային փուլերում առաջին տեղեր գրաված Գեղարքունիքի, Վերին Գետաշենի թիվ 1, Դմաշենի, Մեծ Մասրիկի միջնակարգ եւ Ճամբարակի ավագ դպրոցների թիմերը:

Մրցումներն անցկացվել են կիսաօլմպիական մրցակարգով:

Եզրափակիչ խաղը կայացել է Գեղարքունիքի եւ Դմաշենի միջնակարգ դպրոցների միջեւ, որտեղ Դմաշենի միջնակարգ դպրոցի թիմը, հաղթելով 6:5 հաշվով, դարձել է մարզային փուլի հաղթող:

Երկրորդ հորիզոնականը զբաղեցրել է Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի թիմը:

Վերին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի թիմը կիսաեզրափակչում 7:5 հաշվով հաղթելով Ճամբարակի ավագ դպրոցի թիմին, զբաղեցրել է երրորդ տեղը:

Մրցանակային տեղեր գրաված դպրոցների թիմերին ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հանձնվել են հավաստագրեր եւ գավաթներ:

Մարզային փուլում հաղթող ճանաչված Դմաշենի միջնակարգ դպրոցի թիմը Գեղարքունիքի մարզը կներկայացնի ֆուտզալի մրցումների հանրապետական փուլի մրցումներում:

Գեղամ Չարվադարյան

21.qxd 22/10/2026 19:53 Page 3

ԱՐՓԻ ՍԻՆԱՆՅԱՆԸ ՀԱՂԹԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎՈԿԱԼ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ

Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի երիտասարդական օպերային ծրագրի շրջանավարտ Արփի Սինանյանը Գերմանիայում անցկացված «Նոր ձայներ» միջազգային վոկալ մրցույթում արժանացել է կանանց անվանակարգի առաջին մրցանակին եւ 15 000 եվրո դրամական պարգեւին:

Ինչպես տեղեկացրեց օպերային երգչուհի Արփի Սինանյանը, Երիտասարդ օպերային երգիչների աշխարհի ամենահեղինակավոր մրցույթներից մեկում այս հաղթանակը կարեւոր ձեռքբերում է իր մասնագիտական ուղու եւ հայկական օպերային արվեստի միջազգային ճանաչման համար:

Մրցույթի եզրափակիչ համերգը կայացել է 2026 թվականի հոկտեմբերի 9-ին՝ Գերմանիայի Գյուտերսլո քաղաքի Stadthalle համերգասրահում: Արդյունքները հոկտեմբերի 10-ին պաշտոնապես հրապարակել է մրցույթի կազմակերպիչ Լիզ Մոնի հիմնադրամը: Տղամարդկանց անվանակարգում առաջին մրցանակին արժանացել է Չինաստանը ներկայացնող բարիտոն Ջիաջոու Վանը:

«NEUE STIMMEN» կամ «Նոր ձայն» մրցույթը հիմնադրվել է 1987 թվականին՝ Լիզ Մոնի նախաձեռնությամբ: Երկու տարին մեկ անցկացվող մրցույթը 2026 թվականին կազմակերպվել է 21-րդ անգամ: Այն նպատակ ունի՝ բացահայտելու երիտասարդ օպերային տաղանդներին եւ աջակցելու նրանց մասնագիտական առաջընթացին՝ կապեր ստեղծելով երգիչների եւ միջազգային օպերային կառույցների միջեւ:

Այս տարվա մրցույթին հայտ է ներկայացրել 1126 երգիչ՝ 69 երկրից: Տեսագրությունների նախնական ընտրությունից հետո 467 մասնակից հրավիրվել է կենդանի լսումների, որոնք անցկացվել են աշխարհի 12 քաղաքներում: Գյուտերսլոյի եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք է ստացել 41 երիտասարդ երգիչ՝ 18 երկրից:

Նրանցից 16-ն անցել են կիսաեզրափակիչ, իսկ ութը՝ եզրափակիչ: Մրցութային շաբաթն ընդգրկել է հոկտեմբերի 5–6-ի լսումները, հոկտեմբերի 7-ի կիսաեզրափակիչը՝ դաշնամուրային նվագակցությամբ, եւ հոկտեմբերի 9-ի եզրափակիչ համերգը՝ նվագախմբի մասնակցությամբ: Այս ընթացքը երիտասարդ արտիստներին հնարավորություն է տվել՝ ներկայացնելու իրենց երաժշտական մեկնաբանությունն ու բեմական անհատականությունը տարբեր կատարողական պայմաններում: Եզրափակիչ փուլի ինն անդամից բաղկացած ժյուրին նախագահել է Փարիզի ազգային օպերայի տնօրեն Ալեքսանդր Նեեֆը: Ժյուրին միավորել է առաջատար օպերային թատրոնների ղեկավարների, արտիստների ընտրության պատասխանատուների եւ կատարողական մեծ փորձ ունեցող մասնագետների: Եզրափակիչ համերգին մասնակիցներին նվագակցել է Դույսբուրգի ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ դիրիժոր Վիտալի Ալեքսեենոկի ղեկավարությամբ: Համերգը հեռարձակվել է միջազգային OperaVision հարթակում՝ ապահովելով ելույթների հասանելիությունն օպերային արվեստի համաշխարհային լսարանին:

Արփի Սինանյանը Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի Երիտասարդական օպերային ծրագրի շրջանավարտ է: Ծրագիրը երիտասարդ երգիչներին հնարավորություն է տալիս կատարելագործելու երաժշտական եւ վոկալ հմտությունները, աշխատելու օպերային դերերգերի վրա, ձեռք բերելու բեմական փորձ եւ պատրաստվելու միջազգային մրցույթների ու մասնագիտական լսումների:

Երգչուհու հաղթանակը հաջորդում է նրա մեկ այլ միջազգային հաջողությանը. 2026 թվականի սեպտեմբերին նա Հունգարիայում անցկացված Եվա Մարտոնի անվան միջազգային վոկալ մրցույթում արժանացել է երրորդ մրցանակին: NEUE STIMMEN մրցույթում առաջին մրցանակի նվաճումը նրա ստեղծագործական ճանապարհի նոր կարեւոր հանգրվանն էր:

Արփի Սինանյանի հաջողությունը ներկայացնում է հայկական վոկալ դպրոցի ներուժն ու երիտասարդ հայ արտիստների կարողությունը՝ ներկայանալու բարձր մրցակցություն ունեցող միջազգային բեմերում: Այս ձեռքբերումը նշանակալի իրադարձություն է Հայաստանի երաժշտական հանրության համար եւ նոր խթան՝ երիտասարդ օպերային տաղանդների զարգացման ու միջազգային առաջխաղացման աշխատանքին:

Արփի Սինանյանը արմատներով Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքից է:

Խոսրով Խլղաթյան

ԼՃԱՇԵՆՈՒՄ ՕԾՎԵԼ Է ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐՆ ՈՒ ԶԱՆԳԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Լճաշեն գյուղում ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Իսահակ եպիսկոպոս Պողոսյանի, աղոթակցությամբ թեմի փոխառաջնորդ Տեր Բաբկեն վարդապետ Սալբիյանի, Գավառի հոգեւոր հովիվ Տեր Նշան քահանա Սարգսյանի եւ Սեւանի հոգեւոր հովվության սպասավոր Տեր Նարեկ քահանա Այվազյանի, օծվել է Լճաշենի նորակառույց սուրբ Մարիամ եկեղեցու խաչերն ու զանգը:

Ինչպես տեղեկացրին Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի առաջնորդարանից, արարողությանը ներկա են եղել Լճաշենի բնակիչներն ու տարբեր բնակավայրերից ժամանած հյուրեր, որոնք կիսել են այս նշանակալից իրադարձության հոգեւոր խորհուրդն ու ուրախությունը:

Լճաշենի Սուրբ Մարիամ եկեղեցու շինարարության մեկնարկը տրվել էր 2013 թվականին, սակայն այն տարբեր պատճառներով ընդհատվել էր ու վերսկսվել 2022 թվականին: Եկեղեցու կառուցման գործում մեծ ներդրում է ունեցել Սեւանի հացի գործարանի տնօրեն Աշոտ Ավետիսյանը:

Նորակառույց եկեղեցու ամբողջական օծումը նախատեսված է 2026 թվականի նոյեմբեր ամսին:

Խոսրով Խլղաթյան

ԽՐԱԽՈՒՎԵԼ ԵՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԸ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Գրադարանավարի օրվա կապակցությամբ ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը գրադարանային ոլորտի մի շարք ներկայացուցիչների երկարամյա, բարեխիղճ եւ նվիրված աշխատանքի, ինչպես նաեւ գրադարանային գործի զարգացման, գրքի եւ ընթերցանության տարածման ու ընթերցասիրության խթանման գործում ունեցած կարեւոր ավանդի համար պարգեւատրել է ԿԳՄՍՆ մեդալներով, պատվոգրերով եւ շնորհակալագրերով:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության Ոսկե մեդալով պարգեւատրվել է Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը: Պատվոգրերով եւ շնորհակալագրով պարգեւատրվել են՝ Գեղարքունիքի մարզային գրադարանի Արվեստի ենթաբաժնի վարիչ Սիրուշ Մազմանյանը, Գավառի համայնքային գրադարանի մատենագետ Նորա Խաչիկի Մարեմկոյանը, Գեղարքունիքի մարզի Մարտունի հմայնքի Վերին Գետաշեն գյուղի գրադարանի գրադարանավար Խանում Դավթյանը, Գեղարքունիքի մարզի Վարդենիսի քաղաքային գրադարանի տնօրեն Քրիստինե Պետրոսյանը:

-Պարգեւների ու խրախուսման արժանացածները գրադարանային գործ նվիրյալներ են, ովքեր եռանդով ու ջանասիրությամբ տարիներ շարունակ ընթերցողներին կապում են մշակույթին, գրին ու գրականությանը, անցկացնում բազմաբնույթ միջոցառումներ, կազմակերպում նոր հրատարակված գրքերի շնորհանդեսներ, հանրահռչակում ազգային ու համամարդկային արժեքները,-ներկայացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 813 ՄԻԼԻՈՆ 386 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ Է ՀԱՏԿԱՑՐԵԼ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ կառավարության 2026 թվականի հոկտեմբերի 8-ի հերթական նիստում որոշում է կայացվել՝ Գեղարքունիքի մարզի երկու սուբվենցիոն ծրագրերի, ինչպես նաեւ մարզով անցնող միջպետական եւ հանրապետական նշանակության ճանապարհների միջին նորոգման աշխատանքների համար հատկացնել 813 միլիոն 386 հազար դրամ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, 40 միլիոն 799.8 հազար դրամ հատկացվել է Ճամբարակ քաղաքի Կոմիտաս փողոցից մինչեւ Վ. Տերյան փողոց ընկած հատվածի, Ճամբարակի համայնքապետարանի հարակից եւ սպասարկող ճանապարհ անցուղի ասֆալտապատման աշխատանքների համար:

44 միլիոն 546.4 հազար դրամ հատկացվել է Մարտունի քաղաքի Մխիթար Հերացի փողոցի սալիկապատ մայթերի կառուցման ծրագրի իրականացման համար:

107 միլիոն 640 հազար դրամ հատկացվել է Ծովագյուղից դեպի Դիլիջանի թունել ընկած 6,1 կիլոմետր հանրապետական նշանակության ճանապարհի միջին նորոգման աշխատանքների համար:

333 միլիոն դրամ հատկացվել է Մ-10 Լճափ-Հայրավանք 7,6 կիլոմետր միջպետական նշանակության ճանապարհի միջին նորոգման աշխատանքների համար:

287 միլիոն 400 հազար դրամ հատկացվել է Ծովագյուղից-Սեմյոնովկա 2 կիլոմետր միջպետական նշանակության ճանապարհի միջին նորոգման աշխատանքների համար:

21.qxd 22/10/2026 19:53 Page 4

/սկիզբը՝ էջ 1-ում

Քանի որ պաշարվելու դեպքում միջնաբերդը չէր կարող իր մեջ տեղավորել բոլոր բնակիչներին՝ իրենց անասուններով ու գույքով, ուստի միջնաբերդը շրջապատող բնակավայրը նույնպես եղել է պատնեշապատ: Այդ պատնեշապատումն իրականացվել է շենի ծայրամասերում տների արտաքին պատերի միացումով, որը, իհարկե, այն հզոր պարիսպը չէր կարող լինել, ինչ ամրոցի կամ միջնաբերդի պարսպի հզորությունն է: Միջնաբերդը, ինչպես վերեւում ասացինք, քառանկյուն տեսք ունի, սկզբնական շրջանում ավելի փոքր տարածություն է զբաղեցրել, սակայն հետագայում, ինչպես պարզ ցույց է տալիս կառուցման տեխնիկան, միջնաբերդն արեւելյան կողմից ընդարձակվել է մեկ երրորդով, արհեստական հողաթումբ պատրաստելու միջոցով, որպեսզի նոր ստեղծված բարձրության մակարդակը հավասարվի բնական բլրի բարձրությանը:

Միջնաբերդն իր պարիսպներում ունի ինը աշտարակներ ու որմնահեցեր, որոնք իրենց դուրս բերված ելուստով այնքան լայն են, որ կարող էին որպես աշտարակ ծառայել: Աշտարակներն ունեն քառանկյունի ձեւ ու դասավորված են միջնաբերդի բոլոր անկյուններում ու դուրս են գալիս երկու հատվող պատերի կողմերը: Որմնահեցերը հիմնա-

կանում կառուցվել են հարավային պարսպի վրա, սակայն պահպանվել է նաեւ հյուսիսային պարսպում: Որմնահեցի այդօրինակ դասավորությունը հասկանալի է, քանի որ հարավային պարիսպը, դրված լինելով բնական ժայռերի վրա, կարող էր շուտ քանդվել, եթե չլինեին այդ հենապատերը, որ ծառայել են որպես աշտարակներ:

Մուտքը մինչեւ լրացուցիչ կառուցումը եղել է միջնաբերդի արեւելյան պարսպի հյուսիսային անկյան մոտ: Լրացուցիչ կառուցումից հետո, երբ ընդլայնվում է միջնաբերդը, մուտքը դարձվել է դեպի հյուսիս, նախկին մուտքին կից: Ճանապարհը, դուրս գալով միջնաբերդի մուտքից, աստիճանաբար թեքվում է դեպի արեւմուտք եւ ապա, գնալով դեպի հյուսիս, կորչում բնակավայրի ավերակներում:

Պարիսպն ունի 4 մետր լայնություն, բարձրությունը 3-5 մետր է: Քարերը կիսամշակ եւ ողորկ կողմերով դարձված են դեպի դուրս: Շարվածքն առանց շաղախի է, քարերը 2-3 խորանարդ մետր մեծություն ունեն, բազալտից են:

Միջնաբերդից 300 մետր հյուսիս- արեւմուտք կա մի ամբարտակ, որը կիսաշրջանաձեւ պատնեշել է կաթսայանման հովիտը հարավ-արեւելքից, եւ



ստացվել է մի հսկայական ջրամբար՝ նման Չանդոյի ձորում կամ Պառավի վանքի շրջակայքում եղած ջրամբարներին: Այդ ջրամբարում են հավաքվել բարձունքներում հալվող ձյուներից կամ անձրեւներից առաջացած ջրերը, որոնք ամռան ամիսներին օգտագործվել են շենի բնակիչների կողմից: Ջրամբարի հողաթումբն ունի մոտ 350 մետր երկարություն, բարձրությունը ջրահավաքի կողմից մեկ մետր է, իսկ իսկ արտաքին կողմից՝ մինչ երկու մետր, հողաթմբի լայնությունը 4-5 մետր է: Հողաթմբի մեջ երեւում է քարերով շարվածք»,- գրում է Գեղեոն Միքայելյանը «Սեւանի ավազանի կիկլոպյան ամրոցները» աշխատության մեջ:

Հնասեր Թաթուլ Տոնոյանի հետ շրջում ենք հնավայրով մեկ: Այն, իրոք, ընդգրկում է ահռելի տարածություն, որը լոկ աչքերով չափել անհնարին է, եթե ոտքով չփորձես կտրել այդ անհաշիվ բլրաշարքերն ու նրանց ստորոտներում տարածվող բնակարանների կամ շինությունների ավերակները: Անգամ անհնար է մտքով հաշիվ պահել, թե քանի բնակարան կամ շինություն կարող է եղած լինել այս առեղծվածային բնակատեղիում: Սակայն մի բան պարզ է, որ այն գործել է հազարամյակներ շարունակ, բավականին բազմամարդ բնակիչներով: Գեղամա լեռնաշղթայի հյուսիսարեւելյան փեշի ողջ տարածքը անասնապահության ու հողագործության համար անսպառ շտեմարան է իրենից ներկայացնում, ինչն էլ տեւական ժամանակ մարդկանց կապել է այս հեքիաթային հող ու ջրին: Հնագույն դամբարանների կողքին, որտեղ կատարված թաղումները սկսվել են անհիշելի ժամանակներից, առկա է նաեւ միջնադարյան գերեզմանոց, որը հուշարձանների պահպանության պետական ցանկում թվագրված է 9-13-րդ դարերով: Այն գտնվում է գյուղատեղիի արեւելյան մասում: Չի բացառվում, որ գերեզմանոցի շրջակայքում ժամանակին գործած լինի նաեւ եկեղեցի: Նույն ցանկում հաշվառված է 7 խաչքար, որոնցից 1-ը թվագրվում է 9-րդ , 2-ը՝ 9-10- րդ, 1-ը՝ 10-րդ, 3-ը՝ 14-15-րդ դարերով:

Իհարկե, այս 7 խաչքարերը շատ չնչին մասն են պատմամշակութային այն հսկայական ժառանգության, որոնք կերտվել են դարերի ընթացքում, հայ մարդկանց մտքի ու ձեռքերի շնորհիվ, ու դեռ հայտնի եւ հասանելի են մնում գիտության ու սերունդերի համար: Սակայն շատ գաղտնիքներ էլ մնացել են հողի տակ կամ պատմության հեռավոր ժամանակների մշուշներում:

Թաթուլ Տոնոյանը ավերակների մեջ ածած փշերի, մասրի թփերի,եղինջների բույլերի, քարակույտերի մեջ բացում ու մատնացույց է անում վաղ միջնադարյան խաչքարերը, որոնք հիմնականում մամռակալած են, սակայն իրենց վրա դեռ պահպանում են քանդակների պատկերավոր գծերը:

Մեզ օգնության են գալիս նաեւ տեղի հովիվները, ովքեր հրաշալի տիրապետում են տեղանքին ու ոգեւորված մատնացույց են անում սովորական աչքի համար դժվարությամբ նկատվող խաչքարերը: Նրանք մի քանիսն են, որոնք կիսով չափ խրված են հողի մեջ կամ ընկած են շուռ տված վիճակում: Նույնիսկ դրանցից մեկը փորձում ենք կանգնեցնել, սակայն դա չի տեղավորվում մեր ուժերի սահմաններում: Վերջում Թաթուլ Տոնոյանը կանգ է առնում թեքությամբ ընկած մի խաչքարին կից հողաթմբի մոտ, որը պատված է առատ աճած կանաչով:

-Մեծերից լսել եմ, որ ժամանակին այս հողաթմբի տակ տասնյակ խաչքարեր են թաքցրել, գուցե ավերող ձեռքերից պաշտպանելու համար: Ինձ թվում է, որ հողի շերտը հեռացնելու դեպքում հնարավոր է հնագիտական նոր գաղտնիքներ բացել: Սեփական նախաձեռնությամբ չեմ ուզում քանդել հողաշերտը՝ իսկությունը ստուգելու համար: Ինձ ոչ միայն օգնող ձեռք է հարկավոր, այլ նաեւ՝ պետական պատկան մարմինների աջակցությունը,-ասաց Թաթուլ Տոնոյանը:

Հովիվներից մեկը պատմեց, որ մի խաչքար էլ ինքը մի քանի տարի առաջ նկատել է հնավայրի արեւելյան կողմում, մեզանից մոտ կես կիլոմետր հեռավորությամբ: Ապա ձիով սլացավ այդ վայրը՝ հուշարձանը գտնելու ու մեզ ցույց տալու համար: Սակայն մոտ 10 րոպե անց վերադարձավ ու տեղեկացրեց, որ իր տեսած խաչքարն այլեւս տեղում չէ, գուցե ինչ-որ մեկը տեղափոխել է այլ վայր:

Ապա մոտենում ենք բուն ամրոցին ու միջնաբերդին, որի պարիսպները տեղ-տեղ դեռ մնացել են կիսականգուն վիճակում: Կարդում ենք միջնաբերդի հյուսիսակողմում տեղադրված ցուցանակը, որն ազդարարում է Ք. Ա. 2-1 հազարամյակով թվագրվող ամրոցի ու բնակավայրի գոյությունը:



Նույն ցուցանակից տեղեկանում ենք նաեւ, որ այս բնակավայրը գործել է նաեւ միջին դարերում, ընդհուպ մինչեւ 17-րդ դարը:

Դժվար է ասել, թե ինչ անվանում է կրել այս բնակավայրը մինչ 17-րդ դարը, որից հետո այստեղ թափանցած քոչվոր ցեղերի կողմից անվանափոխվել ու ստացել է օտարահունչ «Յոնջալուխ» անունը: Սակայն տասնյակ ու հարյուրավոր հեկտարներ ընդգրկող այս բնակավայրը հազարամյակներ շարունակ հանդիսացել է հայ ժողովրդի ծագման, զարգացման ու ծաղկման, միավորման, պետականության կերտման վայրը, որտեղ բացի խաղաղ ու ստեղծագործ կյանքի ընթացքը, հաճախակի են տեղի ունեցել նաեւ ռազմական արյունալի բախումներ, նվաճումներ ու գերեվարություն, պատմական այլ իրադարձություններ:

«Առվույտ դաշտի» ամրոցը Վանի թագավորության արքաների թողած սեպագիր արձանագրություններում հիշատակված Վելիքուխի երկրի ամրաշինական հզոր կառույցներից ու մարդաշատ բնակավայրերից մեկն է եղել, որը պաշտպանել է պետական այդ միավորի կենտրոնը արեւմտյան կողմից: Վանի արքա Արգիշտի Առաջինի թողած մի սեպագիր արձանագրության մեջ կա հիշատակություն այն մասին, որ ինքը Սեւանա լճի ավազանից որպես ռազմավար է տարել 1 միլիոն խոշոր եղջերավոր անասուն: Դժվար չէ պատկերացնել, որ այդ ահռելի անասնագլխաքանակի մի մասն էլ բռնագրավվել է հենց «Առվույտի դաշտի» բնակատեղի-



ից:

Բացի Գեղեոն Միքայելյանի հիշատակած արհեստական ջրամբարը, որից շենի բնակիչներն օգտվել են, չի բացառվում, որ գործած լինի նաեւ ջրամատակարարման առանձին համակարգ, որը կարող էր սնվել մոտ կամ հեռու գտնվող աղբյուրներից, ավելի բարձրադիր վայրերում գտնվող բնական լճերից, որոնք ջրառատ են մնում նաեւ մեր ժամանակներում, տարվա բոլոր ամիսներին:

Այստեղ, իհարկե, անսահման ու աներեւակայելի գաղտիքներ դեռ կան թաքնված, քանի որ այս հնավայրը հնագետների կողմից քիչ ուսումնասիրված վայրերից է, գրեթե չպեղված վայրերից, որտեղ, սակայն, թաքնված է պատմամշակութային հարուստ ժառանգություն՝ իր մեջ քաղաքակրթական մի քանի շերտեր ու դարաշրջաններ ամփոփած:

Մեր այցելության պահին հնավայրին շունչ ու ոգի, կենդանություն տվողները հովիվներն էին, իրենց հոտերն ու նախիրները, նրանց հսկող ու մեզ վրա հաչոցներով գրոհող գամփռները, որոնք մեզ հիշեցնում էին հեռավոր դարերը, հովվերգական կյանքով ապրող ու շնչող աշխարհը, այդ ճանապարհով եկած ու անցած սերունդներին:

Խոսրով Խլղաթյան

21.qxd 22/10/2026 19:53 Page 5

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ

/սկիզբը՝ էջ 1ում/

Մոտ չորս մետր բարձրության, չորս մետր երկարության եւ երեք մետր լայնության այս մատուռի կառուցումը եղել է նրա վաղեմի երազանքը, քանի որ, ինչպես ինքն է պատմում, հաճախ է իրեն երազում այցելել ճերմակամորուք մի մարդու տեսքով սուրբը եւ մատնանշել մատուռի ճիշտ տեղը, որը գտնվել է նրա հողամասում, հողի տակ թաղված հին, որձաքարերով շարված պատի տեղում: Դրանից հետո որմնադրությամբ իր բազմաշունչ ընտանիքը կերակրող Գրետը որոշել է նախագծել ու կառուցել մատուռը, որը սկսել է հեռավոր 1980 թվականից: Նա բացել է հողի տակ թաղված հին պատը, այնտեղից գտել հին մատուռի մաս կազմող չորս սրբատաշ քարերը, որոնք 18-րդ դարում կարափափախ թուրքերի կողմից ավերված հին մատուռից պահպանվածներն են, ապա փորել մատուռի հիմքերը եւ դրել առաջին սրբատաշ քարերը: Պատերի առաջին շարքերը նոր են սկսել բարձրանալ, երբ ՀԽՍՀ պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության կողմից եկել են պաշտոնական մարդիկ, ուսումնասիրել տեղանքը եւ հայտարարել, թե այդ նույն տեղում էլ հենց



եղել է թաղածածկ Սուրբ Հակոբ մատուռը, եւ նախագիծն էլ հնից գրեթե շեղում չունի: Մատուռի շինարարությանը Գրետը թափ է հաղորդել 2005 թվականից հետո՝ անթերի գլուխ բերելով թաղածածկը: Նա աշխատանքները հիմնականում կատարել է իր մասնագիտական եւ վարձու աշխատանքից ազատ ժամերին կամ օրերին միայն, որոնք սովորաբար հազվադեպ են եղել: Սուրբ Հակոբ մատուռը բացվել եւ օծվել է 2012 թվականին: Գեղարքունիքի մարզում եւ Հայաստանի բնակավայրերով մեկ վարպետ Գրետն իր ձեռքերով հասցրել է կառուցել 500 տուն:

Նա արդեն բոլորել է իր կյանքի 87-րդ տարին, սակայն երիտասարդական ավյունով ու եռանդով շարունակում է հայրենի պատմաշակութային արժեքների պահպանության ու հանրահռչակման գործը: Վարպետ Գրետը Սուրբ Հակոբ մատուռի մուտքը եւ շրջակայքը զարդարել է նորակերտ գեղաքանդակ խաչքարերով, հին հայկական ճարտարապետության տարր հանդիսացող քարե սյուների խարիսխներով, երկանքներով, սանդերով, սայլերի անիվներով ու գյուղատնտեսական հին գործիքներով, իսկ մատուռի ներսում տեղադրել է գյուղի տարածքից գտնված քարեդարյա գործիքներ՝ ստեղծելով հնագիտական գրավիչ միջավայր:

Հենց նրա ուղեկցությամբ էլ այցելում ենք Գեղարքունիքի Սուրբ Գեւորգ եկեղեցի ու նրա հյուսիսային կողմում տարածվող պատմական գերեզմանոց:

Հուշարձանների պահպանության պետական ցանկում Սուրբ Գեւորգ եկեղեցին համարվում է 16-17-րդ դարերի կառույց, որը մեկ անգամ էլ վերանորոգվել է 1866 թվականին:

Սուրբ Գեւորգ եկեղեցին հիմնահատակ կործանվել է 17-18-րդ դարերի ընթացքում, Գեղարքունիք գյուղը քանիցս ասպատակած ու շենը բռնի հայաթափած թուրք ու լեզգի հրոսակների կողմից: 1830 թվականին այստեղ վերաբնակված արեւմտահայ ընտանիքների կողմից այն վերականգնվել է, գործել մինչեւ 1930-ական թվականները, բայց վերջնականապես ավերվել ու լքվել է Խորհրդային անաստվածության տարիներին ու այժմ գտնվում է կիսավեր վիճակում, հիմնովին զուրկ ծածկից:

Նույն ցանկում հաշվառված է 12 խաչքար-տապանաքար, որոնք թվագրված են 9-ից 18-րդ դարերով:

Դժվար է ասել, թե ինչ հիմքով է այն համարվում 16-17-րդ դարերի կառույց: Անշուշտ, այդ ժամանակների կառուցվածքային տարրեր նկատելի են այստեղ, սակայն մի բան պարզ է, որ այս սրբավայրը գործել է շատ ավելի վաղ ժամանակներից, անգամ՝ նախաքրիստոնեական շրջանից:

Առաջինը դա կարող են հաստատել դեռեւս պահպանված պատերի շարվածքները, որոնք կատարված են խոշոր քարերով, առանց շաղախի, կիկլոպյան դարաշրջանի շարվածքի ոճին համահունչ: Իսկ եկեղեցու արեւելյան ու հյուսիսային կողմերում մեծ մակերեսների վրա տարածվող շինությունների պատերի կիսավեր հիմքերը ենթադրել են տալիս, որ այս սրբավայրը չի սահմանափակվել միայն ներկա կիսավեր շինության հատեստ չափսերի մեջ, որը հազիվ կազմում է շուրջ 90 քառակուսի մետր մակերես: Թե ինչ կառույցների հետքեր են պահպանվել շուրջ 1 հեկտար ընդգրկող տարածքում, առայժմ դժվար է ասել, սակայն փաստ է, որ դրանք մեզ հասել են շատ հին ժամանակներից, որոնք կարող են հաստատվել ուսումնասիրությունների ու պեղումների արդյունքում: Իսկ իններորդ դարից պահպանված խաչքարերն արդեն փաստում են այս սրբավայրի, հոգեւոր կառույցի միջնադարյան շերտի լինելության մասին:

Անվանի հայագետ Սեդրակ Բարխուդարյանն իր «Դիվան հայ վիմագրության» կոթողային աշխատության մեջ զետեղել է ընդամենը 2 վիմագիր արձանագրության վերծանում: Երկու վիմագրերն էլ գտնվում են եկեղեցու արեւմտյան պատի մեջ ագուցված խաչքարերին: Մեկը Գալատոկի խաչքարն է՝ 1536 թվականի արձանագրությամբ, մյուսը՝ Մարտոսի խաչքարը, որը թեեւ երկատված է, սակայն պահպանված մասում արձանագրության հետ կրում է նաեւ Քրիստոսի խոցող զինվորների քանդակը: Այն համարվում

է 15-16-րդ դարերի գործ:

Շատ շքեղ տեսք ունեն նաեւ ներսի կողմից եկեղեցու հյուսիսային ու հարավային պատերի մեջ ագուցված տապանաքարերը, որոնց վրա պատկերված են ինչպես կույսերի, այնպես էլ վանականների գավազանների քանդակներ: Վանականի տապանաքարերից մեկի վրա էլ հստակ նկատվում է վիմագիր արձանագրություն, որը վերծանման կարիք ունի:

Վիմագրություններ նկատեցինք նաեւ պատմական գերեզմանոցի տարածքում գտնվող առանձին խաչքարերի ու տապանաքարերի վրա, որոնք նույնպես մասնագետների կողմից վերծանման կարիք ունեն: Միջնադարյան պատկերազարդ տապանաքարեր կան, որոնք ժամանակի ընթացքում օգտագործվել են երկրորդ անգամ՝ արդեն իրենց վրա կրելով 19-20-րդ դարերում ապրած մարդկանց անունները:

Վարպետ Գրետը մեր ուշադրությանն է ներկայացնում երկու խոշոր տապանաքար, որոնցից մեկի վրա կենցաղային տեսարաններ են քանդակված, մյուսի վրա՝ հագուստի ու արդուզարդի մեջ պատկերված գեղեցիկ կին: Ըստ Գրետ Ղազարյանի մեկնաբանության՝ կենցաղային պատկերներ արտացոլող տապանաքարի տակ հանգչում է աստիճանավոր տղամարդ, հավանաբար՝ տարածքի տեր իշխանը, քանի որ գերեզմանաքարի վերին մասը քանդակված է ելուստներով, ինչը խոսում է քարի տակ հանգչող մարդու բարձր աստիճանավոր լինելու մասին:

-Տապանաքարի հյուսիսային կողմում պատկերված է մի մարդ՝ հրացանն առաջ պարզած, ինչը կարող է նշանակել, որ այս մեծավորը սպանվել է հրացանի կրակոցից: Իսկ կողքի քարին պատկերված կինը կարող է լինել այս աստիճանավորի կինը,-համոզված ու ոգեւորված մեկնաբանում է վարպետ Գրետը:

Ապա նա կողքի տնից բահ է խնդրում, որով մաքրում ու հողի տակից վեր է հանում

2 տապանաքար, որոնք հիացնում են իրենց բարձրարվեստ քանդակներով: Դրանցից մեկը խոյ-տապանաքար է, որի վերեւի կողմում պատկերված է կույսի քանդակ, իսկ ներքեւի կողմը գտնվում է հողի հաստ շերտի տակ: Հաջորդ տապանաքարը շատ ավելի խորհրդավոր ու բովանդակալից է: Մեջտեղում պատկերված է հեծյալ տղամարդ, խույրը գլխին, իսկ երկու կողմերում պատկերված են թագակիր երկու այլ մարդիկ: Ձախ կողմի մարդը հեծյալի գլխավերեւում պահել է շապիկին հայերեն տառեր կրող գիրք, իսկ աջ կողմում գտնվող մարդը՝ գինու գավը: Տապանաքարի մյուս երեսը թաղված էր հողի հաստ շերտի տակ, ուստի հնարավոր չեղավ պարզել՝ արդյո՞ք տապանաքարն այլ արձանագրություն ուներ, թե ոչ: Հավանաբար, երկու քանդակներն էլ ստեղծվել են 16-17-րդ դարերի ընթացքում: Արդեն կասկած լինել չի կարող, որ հողի շերտի տակ այլ խաչքար-տապանաքարեր էլ թաքցված լինեն, որոնք կարող են նոր լույս սփռել այս բազմաշերտ հուշարձանի պատմության ու պատմամշակութային արժեքների վրա:

Երբ հոդվածը պատրաստ էր հրապարակման, պարզ դարձավ, որ Գեղարքունիք գյուղում գործող «Աժդահակ» սոցիալ-բնապահպանական կենտրոնը հանդես է եկել Գեղաարքունիքի սուրբ Գեւորգ եկեղեցին վերականգնելու առաջարկ-նախաձեռնությամբ:

Հուսանք, որ այս կարեւոր, ազգանվեր նախաձեռնությունը կյանքի կկոչվի Գեղարքունիքի բնակչության, պատկան մարմինների, աշխարհիկ ու հոգեւոր կառույցների համատեղ ուժերով, քանի որ միայն այսպես մոռացությունից, անտարբերության ճիրաններից, ոչնչացումից կփրկվի իր մեջ պատմամշակութային մի քանի դարաշրջաններ կրող կառույց, որը ժամանակների ընթացքում տակնուվրա է եղել պատմական արհավիրքների պատճառով, վերաշինվել քանիցս այլ դժվար ու դժնի ժամանակներում, սակայն հիմա մնացել է լքված, կիսավեր, հիմնովին փլուզվելուն շատ մոտ վիճակում, այն էլ՝ ազատ ու անկախ Հայաստանի պատմական ժամանակներում: Իսկ նման տխուր իրողությունը ոչ մեկիս պատիվ չի բերում: Այո, պետք է ամեն կերպ նոր կյանք ու շունչ հաղորդել այս հուշարձանին:

Իսկ վարպետ Գրետը ոչ միայն համամիտ է մեր կարծիքին, այլ նաեւ պատրաստակամ՝ իր ներդրումն ունենալու Գեղարքունիքի Սուրբ Գեւորգ եկեղեցին վերականգնելու ազգանվեր գործում:

Խոսրով Խլղաթյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ ԵՆ 8 ՄԻԼԻԱՐԴ 255 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ԱՐԺԵՔՈՎ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում հոկտեմբերի սկզբից կմեկնարկեն 2026 թվականի սուբվենցիոն ծրագրերը ճանապարհաշինության, խմելու եւ ոռոգման ջրի մատակարարման համակարգերի կառուցման ոլորտներում, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 8 միլիարդ 255 միլիոն դրամ:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, խմելու ջրամատակարարման համակարգի կառուցման կամ նորացման ուղղությամբ կծախսվի 3 միլիարդ 155 միլիոն դրամ, ոռոգման համակարգերի կառուցման ուղղությամբ՝ 2 միլիարդ 756 միլիոն դրամ, ճանապարհների հիմնանորոգման համար՝ 2 միլիարդ 344 միլիոն դրամ:

-Այս երեք ուղղություններում նախատեսված ծրագրերի շինարարական մրցույթներն արդեն կայացել են, հաղթող կազմակերպությունները հայտնի են, պայմանագրերի կնքման գործընթացն էլ մոտենում է ավարտին: Որոշ տեղերում արդեն սկսվել են շինարարական աշխատանքները, որոշ տեղերում էլ դրանք կմեկնարկեն առաջիկա օրերի ընթացքում: Ծրագրեր կիրականացվեն համայնքի բոլոր բնակավայրերում: Բնական է, որ մեկնարկող ծրագրերի համար ավարտի ժամանակաշրջան կսահմանվի 2027 թվականը,- ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

21.qxd 22/10/2026 19:53 Page 6

ԳԱՎԱՌԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՊԱՏԻՆ ՏԵՂԱԴՐՎԵԼ Է ՀՈՒՇԱՔԱՐ

Գավառ քաղաքի Հայրապետ Խաչատրյանի անվան արվեստի դպրոցի պատին ամրացվել է պատմական իրադարձություններն ազդարարող հուշաքար, որը հավերժացնում է դպրոցի պատմամշակութային նշանակությունը:

Ըստ պատմական տեղեկությունների՝ 1918 եւ 1921 թվականներին դպրոցի պատշգամբից ելույթ են ունեցել հայ ականավոր զորավարներ Անդրանիկ Օզանյանը եւ Գարեգին Նժդեհը:

Միջոցառման ընթացքում ներկայացվել են պատմական իրադարձություններ, հայ զորավարների գործունեությանն ու ելույթներին վերաբերող դրվագներ:

Հանդիսավոր արարողությունն ուղեկցվել է նաեւ արվեստի դպրոցի տարբեր բաժինների սաների գեղարվեստական կատարումներով:

Հուշաքարի բացման պատիվը վերապահվել է Գավառի պետական համալսարանի ուսանող, բանաստեղծուհի Միլենա Դարբինյանին:

Հուշաքարի բացման արարողությանը մասնակցել են Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Գրիգոր Բոշյանը, Գավառի Հայրապետ Խաչատրյանի անվան արվեստի դպրոցի տնօրեն Քրիստինե Բադեյանը, համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչներ եւ բնակիչներ:

-Այս կարեւոր նախաձեռնության հեղինակը Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանն է, ում անունից ջերմորեն շնորհավորում եմ միջոցառման մասնակիցներին: Հուշաքարի բացումը ոչ միայն պատմական հիշողության վերարժեւորման եւ այն սերունդներին փոխանցելու կարեւոր քայլ է, այլեւ նպաստում է Գավառ քաղաքի զբոսաշրջային գրավչության բարձրացմանը: Նմանօրինակ նախաձեռնությունները համայնքապետարանի կողմից կրելու են շարունակական բնույթ,- միջոցառման մասնակիցների առջեւ ունեցած ելույթում նշեց Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը:

Ալվարդ Մանուկյան

ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ԲԱՅԴԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈԵՆԵՐԻ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ



Հոկտեմբերի 4–ին Հրազդան գետում անցկացվել է բայդարկաների եւ կանոեների հուշամրցաշար, որը նվիրվել է Արցախյան 44-օրյա պատերազմում հերոսաբար զոհված Գորիս Հովսեփյանի հիշատակին:

Հուշամրցաշարն անցկացվել է Սեւանի ջրային մարզաձեւերի դպրոցի նախաձեռնությամբ:

Հուշամրցաշարին մասնակցել են 40-ից ավել մարզիկներ: Հաղթողները պարգեւատրվել են հուշամեդալներով եւ գավաթներով:

Արդեն 6-րդ տարին է, ինչ Սեւանի Աշոտ Ավետիսյանի անվան ջրային մարզաձեւերի դպրոցը նախաձեռնում եւ անցկացնում է բոյդարկաների եւ կանոեների հուշամրցաշարը, որը դարձել է ավանդական:

Գորիսը ծնվել է 2001թվականի փետրվարի 14-ին, Սեւան քաղաքի Ցամաքաբերդ թաղամասում: Զբաղվել է տարբեր մարզաձեւերով: Ամենից շատ սիրում էր թիավարությունը: Մասնակցել է շատ մրցումների ու միշտ զբաղեցրել է առաջատար հորիզոնականներ: Ստացել է շատ պատվոգրեր, մեդալներ ու մրցանակներ: Ավարտել է Ցամաքաբերդի թիվ 5 միջնակարգ դպրոցը, այնուհետեւ Սեւանի պետական քոլեջը:

2019 թվականի հուլիսին ուսումը կիսատ թողելով զորակոչվել էր բանակ:

Հայրենի երկրի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած արիության ու խիզախության համար Գորիս Հովսեփյանը հետմահու պարգեւատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Արմինե Ղուկասյան

ՍԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԵՎ ՍԱՆԵՐԻՆ

Սեւանի երաժշտական դպրոցը հյուրընկալել է Երեւանի Միքայել Միրզոյանի անվան երաժշտական դպրոցի ուսուցիչներին եւ սաներին:

Այցը կազմակերպվել է «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում, որի նպատակներից է՝ խթանել ՀՀ մարզերի ու Երեւանի երաժշտական եւ արվեստի դպրոցների սաների ու մանկավարժների միջեւ գործնական, կրթական եւ ստեղծագործական համագործակցությունը:

Այցը ոչ միայն ճանաչողական էր, այլ նաեւ երաժշտական. դպրոցի սաները, դասատուները շրջեցին երաժշտական դպրոցի նորակառույց շենքում, ծանոթացան առկա հնարավորություններին, գործող դասարաններին, ապա ներկայացան համերգային ծրագրով:

Համերգային ծրագիրը բազմաբովանդակ էր, հագեցած, կատարումներն աչքի էին ընկնում կատարողական բարձր արվեստով: Պատանի երաժիշտների կատարումներն արժանացան բարձր գնահատականի եւ դրվատանքի:

Արմինե Ղուկասյան

ԿԱՅԱՑԵԼ Է ԿԱՐԻՆԵ ՂԱՐԱԲԱՂՅԱՆԻ «ՊԱՏԱՍԽԱՆԸ ՉԻ ՈՒՇԱՆԱ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Գեղարքունիքի Վարդգես Պետրոսյանի անվան մարզային եւ Գավառի համայնքային գրադարանների կազմակերպմամբ, Գավառի համայնքապետարանի ու Գավառի ուսուցողական կենտրոնի համագործակցությամբ եւ աջակցությամբ տեղի է ունեցել բանաստեղծ-երգահան Կարինե Ղարաբաղցյանի «Պատասխանը չի ուշանա» գրքի շնորհանդեսը:

«Պատասխանը չի ուշանա» ժողովածուն Կարինե Ղարաբաղցյանի երկրորդ գիրքն է: Նրա առաջին ժողովածուն՝ «Հոգուս երկունքը», լույս է տեսել 2014 թվականին:

Նոր ժողովածուն հրատարակվել է Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի հովանավորությամբ:

Գրքում ընդգրկված են ծոներգեր, քնարական բանաստեղծություններ, էսսեներ եւ պիես՝ ներկայացնելով հեղինակի ստեղծագործական աշխարհի բազմազանությունն ու գրական հետաքրքրությունների լայն շրջանակը:

Միջոցառմանը մասնակցել են Կարինե Ղարաբաղցյանի ընտանիքի անդամները, հարազատները, գործընկերներն ու բարեկամները, ինչպես նաեւ Գավառ համայնքի կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչներ:

Շնորհանդեսի ընթացքում ներկայացվել են հեղինակի ստեղծագործությունների առանձնահատկությունները, հնչել նրա հեղինակած երգերը:

Ելույթ ունեցողները շնորհավորել են Կարինե Ղարաբաղցյանին՝ մաղթելով ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Ալվարդ Մանուկյան

«CBD COP17 ԿԱՆԱՉ ԳՈՏՈՒՄ» ՆԿԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՑ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ 142 ԴՊՐՈՑԱԿԱՆ

«CBD COP17 Կանաչ գոտում» մասնակցության համար հայտարարված նկարչական մրցույթին Գեղարքունիքի մարզից մասնակցել են 142 դպրոցական:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, «Դպրոցականների տեսլականը Սեւանա լճի համար 2050 թվականին. Երեխաների ձայնը քաղցրահամ ջրերի կենսաբազմազանության համար» ծրագրի շրջանակում ավարտվել են Սեւանա լճի ափամերձ շուրջ 36 բնակավայրերի 13–16 տարեկան դպրոցականների համար իրականացվող իրազեկման միջոցառումներն ու նկարչական մրցույթները:

Տարբեր համայնքներում կազմակերպված նկարչական մրցույթներին մասնակցել են 142 դպրոցական, որոնցից 54-ը՝ Մարտունիում, 32-ը՝ Ճամբարակում, 30-ը՝ Գավառում, 19-ը՝ Վարդենիսում եւ 17-ը՝ Սեւանում:

Մրցույթների ավարտին յուրաքանչյուր համայնքից ընտրվել են 10 լավագույն աշխատանքները, որոնք ցուցադրմամբ էլ կազդարարվի այս ծրագրի փակման արարողությունը Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (CBD COP17) «Կանաչ գոտում»: Այնտեղ ցուցադրված աշխատանքներից կընտրվեն 3 լավագույնները, որոնք կարժանանան մրցանակների:

ԵՐԱՆՈՍՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս գյուղում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սեպտեմբերի վերջերից սկսվել եւ ընթանում են արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Երանոսի վարչական ղեկավար Սաշա Բավեյանը, Երանոսի արտաքին լուսավորության ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է շուրջ 32 միլիոն դրամ, որի 55 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 45 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է արտաքին լուսավորության ցանցի կառուցում Երանոս գյուղի 3-րդ, 4-րդ, 7-րդ, 21-րդ, 22-րդ եւ 23-րդ փողոցներում, շուրջ 5 կիլոմետր երկարությամբ, 191 լուսատուների տեղադրմամբ: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել այս տարվա ընթացքում:

21.qxd 22/10/2026 19:53 Page 7

ՄԵՐ ԹԵՐԹԻ ՀԱՎԵՐԺ ԲԱՐԵԿԱՄ ԼՅՈՒՅՍ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

«Գեղամա աշխարհե թերթը վերջերս կորցրեց իր լավագույն բարեկամներից ու ընթերցողներից մեկին՝ Լյուսյա Հովհաննիսյանին:

Նա Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Մանանա Գալստյանի՝ արդեն հավերժի ճամփան բռնած լուսահոգի տատն էր, ով մեր թերթի յուրաքանչյուր համար ստանում էր իր թոռնուհու միջոցով, ընթերցում, վերլուծում, ապա անհամբեր սպասում հաջորդ համարին: Նա սրտանց ուրախանում էր մեր աշխարհի հաջողություններով ու ձեռքբերումներով, սիրով ծանոթանում Գեղարքունիքի մարզի պատմամշակութային արժեքներին ու իրադարձություններին:

Իսկ ո՞վ էր Լյուսյա Հավհաննիսյանը, կյանքի ի՞նչ ճանապարհ էր անցել նա:

Լյուսյա Հովհաննիսյանը ծնվել է 1939 թվականին՝ Սիրիայում, Աբրահամի եւ Երանուհու ընտանիքում: Նա այդ ընտանիքում ծնված ու մեծացած իննը քույրերից մեկն էր: Նրա կյանքի պատմությունը մի ամբողջ ընտանիքի ճակատագրի մասն է՝ հայրենադարձության, մեծ հույսերի, դժվարությունների հաղթահարման եւ հայրենիքում նոր կյանք կառուցելու մասին:

1947 թվականին Լյուսյայի ընտանիքը որոշել է վերադառնալ Հայաստան: Ընտանիքի հայրը՝ Աբրահամը, մտահոգվել է, որ իր բոլոր դուստրերը, մեծանալով Սիրիայում, հետագայում կարող են ամուսնանալ այլազգիների հետ: Նա ցանկացել է, որ աղջիկները մեծանան հայրենիքում՝ պահպանելով իրենց ազգային ինքնությունն ու հայ ժողովրդի հետ կապը: Այդ որոշման արդյունքում ընտանիքը ճանապարհ է ընկել դեպի Հայաստան՝ հավատալով, որ հայրենիքում իրենց ավելի բարեկեցիկ ապագա է սպասում:

Ընտանիքը Հայաստան է եկել 1947 թվականին՝ հայրենադարձների վերջին նավով: Լյուսյայի պատմածով՝ նավի բոլոր ուղեւորներին ստիպել են իրենց հետ բերած իրերը նետել ծովը՝ վստահեցնելով, որ Հայաստանում ամեն ինչ առատ է, եւ նրանք ոչնչի կարիք չեն ունենա: Հավատալով այդ խոսքերին՝ մարդիկ ստիպված են եղել հրաժարվել իրենց ունեցածից՝ իրենց հետ բերելով միայն այն, ինչ հնարավոր է եղել պահպանել:

Սակայն հայրենիքում նրանց բոլորովին այլ իրականություն է սպասել: Սիրիայում ապահովված եւ մեծահարուստ համարվող ընտանիքը Հայաստանում բախվել է ծանր պայմանների, զրկանքների ու գոյատեւելու ամենօրյա պայքարի: Հայրենիք վերադառնալու մեծ հույսերը բախվել են կյանքի դաժան իրականությանը, եւ նոր կյանք կառուցելը դարձել է դժվարին փորձություն:

Այդ ծանր օրերին ընտանիքի փրկությանն է նպաստել մայրիկի՝ Երանուհու հեռատեսությունն ու մայրական հոգատարությունը: Նա երեխաների հագուստների մեջ գաղտնի ոսկե դրամներ էր կարել: Այդ դրամներն էլ սկզբնական շրջանում օգնել են ընտանիքին գոյատեւել եւ հաղթահարել հայրենիքում ապրելու առաջին, ամենադժվար տարիները:

Այս պատմությունը Լյուսյայի մանկության ամենակարեւոր հիշողություններից է՝ մի պատմություն, որի մեջ միահյուսված են ծնողների հույսերը, հայրենիքի հանդեպ հավատը, մոր հնարամտությունն ու երեխաներին պաշտպանելու անսահման կամքը:

Տարիներ անց ինը քույրերից շատերը մեկնել են Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ իրենց կյանքի նոր փուլը սկսելով օտար երկրում: Լյուսյան, սակայն, մնացել է Հայաստանում: Նա իր կյանքը կառուցել է այն երկրում, ուր ընտանիքը եկել էր՝ հավատալով հայրենիքում ապրելու եւ ապագա կերտելու հնարավորությանը:

Լյուսյա Հովհաննիսյանը երկար տարիներ աշխատել է տարբեր գործարաններում, այնուհետեւ՝ ,Արմենիաե հյուրանոցում: Աշխատանքը նրա կյանքի կարեւոր մասն էր, իսկ տարիների ընթացքում նա իր ուժն ու եռանդը ներդրել է առօրյա կյանքի եւ ընտանիքի հոգսերի մեջ:

Նա կենսուրախ էր, շատ էր սիրում կյանքը եւ կարողանում էր գնահատել դրա պարզ ուրախությունները: Նրա կյանքի կարեւորագույն արժեքներից էին ընտանիքը, հարազատների հանդեպ սերն ու հոգատարությունը: Լյուսյայի մասին ամենաջերմ հիշողությունները կապված են նրա բնավորության, ապրելու եռանդի, ընտանեկան ջերմության եւ հարազատների հետ անցկացրած պահերի հետ:

Լյուսյան ընտանիք է կազմել Գալստյան Վանիկի հետ: Նրանք ունեցել են երեք զավակ՝ Աբրահամին, Եղիսաբեթին եւ Ջուլիային: Տարիների ընթացքում ընտանիքը մեծացել է՝ պարգեւելով նրան երեք թոռ եւ չորս ծոռ:

87 տարվա ընթացքում Լյուսյա Հովհաննիսյանն անցել է կյանքի տարբեր փուլերով՝ մանկություն Սիրիայում, հայրենադարձություն, դժվարություններով լի սկիզբ Հայաստանում, երկար տարիների աշխատանք, ընտանիքի ստեղծում եւ սերունդների մեծացում: Նրա ապրած կյանքն իր մեջ ամփոփում է մի ամբողջ ժամանակաշրջանի պատմություն՝ հայրենիք վերադառնալու վճռականություն, դժվարությունների դեմ պայքար եւ ապրելու անսպառ սեր:

2026 թվականի օգոստոսի 30-ին, 87 տարեկան հասակում, Լյուսյա Հովհաննիսյանը հեռացել է կյանքից՝ թողնելով իր հարազատներին քանկ հիշողություններ եւ մի պատմություն, որն արժանի է պահպանվելու սերունդների համար:

Նրա կյանքը շարունակվելու է իր զավակների, թոռների ու ծոռների մեջ՝ նրանց հիշողություններում, ընտանեկան պատմություններում եւ այն արժեքներում, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ:

Լյուսյա Հովհաննիսյանի հիշատակը միշտ կմնա լուսավոր՝ որպես սիրելի մայր, տատիկ ու ծոռների մեծ մայր, որպես կյանքը սիրող եւ իր արմատներին հավատարիմ կին, որպես «Գեղամա աշխարհ» թերթի բարեկամ ու նվիրյալ ընթերցող:

«Գեղամա աշխարհ»
թերթի խմբագրություն

ԶՈԼԱՔԱՐՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ 2 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սուբվենցիոն երկու ծրագիր է իրականացվում: Ընթացքի մեջ են ոռոգման եւ խմելու ջրատարների ներքին ցանցի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Զոլաքարի խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 31 միլիոն դրամ, որի 70 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 30 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցում Զոլաքար գյուղի 15 եւ 16-րդ փողոցներում, 2000 մետր երկարությամբ: 2026 թվականի հոկտեմբերի 14-ի դրությամբ շինարարական աշխատանքներն արդեն իրականացված են շուրջ 50 տոկոսով:

Շինարարական աշխատանքները կավարտվեն 2026 թվականի ընթացքում:

-Ծրագրի շահառու են համարվում նորաստեղծ փողոցներում բնակվող 15 ընտանիք: Այս ծրագրով էլ Զոլաքար գյուղում ավարտվում է խմելու ջրամատակարարման ներքին ու արտաքին ցանցերի արդիականացման գործընթացը, որի մեկնարկը տրվել էր 2016 թվականից: Կառուցվել է շուրջ 80 կիլոմետր երկարության խմելու ջրատարի ներքին ու արտաքին ցանց, ինչի արդյունքում ոչ միայն արդիականացվել է ջրամատակարարման ողջ համակարգը, այլ նաեւ էապես բարելավվել է ջրամատակարարումը: Ձմռան ամսիներից արդեն անցնելու ենք շուրջօրյա ջրամատակարարման,- ներկայացրեց Զոլաքար գյուղի վարչական ղեկավար Հրայր Մարգարյանը:

Զոլաքարի ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 50 միլիոն դրամ, որի 70 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 30 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցում Զոլաքարի 10-րդ փողոցում, 1060 մետր երկարությամբ, երկաթբետոնյա կիսախողովակներով:

2026 թվականի հոկտեմբերի 20-ի դրությամբ շինարարական աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

Ծրագրի իրականացման արդյունքում 2027 թվականի ոռոգման շրջանից շուրջ 40 տնտեսությունների պատկանող 50 հեկտար հողամասերում ոռոգման ջուրը կմատակարարվի անկորուստ եւ ժամանակին:

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԱՐԶԱՀՐԱՊԱՐԱԿ Է ԲԱՑՎԵԼ

Գավառի թիվ 3 հիմնական դպրոցի բակում տեղի է ունեցել «Street Workout» մարզահրապարակի բացման հանդիսավոր արարողություն:

Մարզահրապարակի կառուցման նախաձեռնությունը պատկանում է Գավառ քաղաքի նախկին բնակիչ, այժմ ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում բնակվող Վանո Զաքոյանին, ով իր համախոհ ընկերների հետ համատեղ ֆինանսական ներդրումների շնորհիվ իրականացրել է այս ծրագիրը:

Մարզահրապարակի կառուցումն իրականացվել է «Street Workout» ֆեդերացիայի եւ Գավառի համայնքապետարանի հետ ակտիվ համագործակցության արդյունքում:

Նոր մարզահրապարակը հանրային եւ անվճար մարզական տարածք է, որտեղ կարող են մարզվել բոլոր ցանկացողները՝ հնարավորություն ունենալով զարգացնել իրենց ֆիզիկական պատրաստվածությունն ու առողջ ապրելակերպի մշակույթը:

Բացման հանդիսավոր արարողությանը մասնակցել են Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը, տեղակալներ Գրիգոր Բոշյանը, Մուրադ Մովսիսյանը, երիտասարդության եւ սպորտի հարցերով պատասխանատու Նարեկ Մուրադյանը, Street Workout ֆեդերացիայի նախագահ Արթուր Հարությունյանը, Գավառի թիվ 3 հիմնական դպրոցի տնօրեն Ռուզաննա Պիպոյանը, Վանո Զաքոյանի հարազատները, մարզիկներ, աշակերտներ, ինչպես նաեւ հատուկ հրավիրված մարզիկներ:

Հյուրերի թվում էր նաեւ 62-ամյա մարսելաբնակ հայազգի մարզիկ, լեռնագնաց, վազորդ Արա Խաչադուրյանը, ով 2016 թվականին բարձրացել է էվերեստի գագաթը, 2018 թվականին Մարսելից վազելով հասել է Հայաստան:

Հյուրերը իրենց ելույթներում շնորհավորել են ներկաներին՝ մարզահրապարակի բացման առթիվ եւ Վանո Զաքոյանի հարազատների միջոցով իրենց երախտագիտությունն են փոխանցել նախաձեռնության հեղինակին:

Ալվարդ Մանուկյան

ԶՈԼԱՔԱՐԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԹԻՄԸ՝ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՂԹՈՂ

Մարտունի համայնքի Զոլաքարի թիվ 1 միջնակարգ դպրոցի թիմը Գեղարքունիքի մարզը կներկայացնի հրաձգության մրցումների հանրապետական փուլում:

ՀՀ մարզերի եւ Երեւան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների «Սպարտակիադա» մարզական միջոցառման շրջանակում Գեղարքունիքի մարզի դպրոցականների միջեւ անցկացվել են հրաձգության մարզային մրցումներ: Դրանք անցկացվել են օդամղիչ հրացաններով՝ մինչեւ թիրախ 10 մետր հեռավորությունից: Հրաձգության միջազգային ֆեդերացիայի կանոնակարգի համաձայն՝ յուրաքանչյուր հրաձիգ կատարել է 8 կրակոց, որից հաշվարկային է եղել 5 լավագույնը:

Թիմային հաշվարկով 372 միավորով առաջին հորիզոնականը զբաղեցրել է Զոլաքարի թիվ 1 միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ տեղը, 328 միավորով, գրավել է Գավառի Գեորգի Մնացականյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցի թիմը, իսկ երրորդ տեղը, 313 միավորով, Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոցի թիմը:

Մրցանակային տեղեր գրաված դպրոցների թիմերին ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հանձնվել են հավաստագրեր եւ գավաթներ:

Հրաձգության մրցումների հանրապետական փուլը կկայանա նոյեմբերի 13-ին, Երեւանում:

Գեղամ Չարվադարյան

21.qxd 22/10/2026 19:53 Page 8

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԼՈՂԻ ՄՐՑԱՇԱՐ

Գեղարքունիքի մարզում անցկացվել է «ՀՀ Վարչապետի գավաթ» դպրոցականների լողի մրցաշարի մարզային փուլը:

Մրցաշարը կազմակերպում եւ անցկացնում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ստեղծված հանձնաժողովը՝ համագործակցելով «Լողի հայկական դաշնություն» մարզական հասարակական կազմակերպության հետ:

Այն անցկացվում է երկու փուլով՝ մարզային եւ եզրափակիչ: Մրցաշարի մարզային փուլի մրցումները կազմակերպում եւ անցկացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը՝ Ֆեդերացիայի կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովի հետ: Մրցաշարն անցկացվում է 2 տարիքային խմբով: Առաջին տարիքային խմբում ընդգրկվում են 4-7-րդ, իսկ երկրորդ խմբում՝ 8-12-րդ դասարանների աշակերտները:

Գեղարքունիքում լողի մարզային փուլն անցկացվել է «Ծաղկաձորի սպորտ համալիր» ՍՊԸ-ի լողավազանում: Մարզային փուլին մասնակցության հայտ են ներկայացրել 103 աշակերտներ, որոնցից 21-ը՝ աղջիկներ:

Այս փուլի մրցումներն անցկացրել է «Լողի հայկական դաշնություն» մարզական հասարակական կազմակերպության կողմից ստեղծված մրցավարական հանձնախումբը՝ Արթուր Հովհաննիսյանի գլխավորությամբ:

Առաջին տարիքային խմբում մասնակիցները մրցել են 50 մետր, իսկ երկրորդ տարիքային խմբում՝ 100 մետր ազատ ոճում, որի արդյունքում ձեւավորվել են մարզի հավաքական թիմերը՝ յուրաքանչյուր տարիքային խմբում ընդգրկելով 4 տղա եւ 4 աղջիկ: Առաջին տարիքային թիմի կազմում ընդգրկվել են Գավառի Ա. Իսահակյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցի աշակերտներ Ալլա Յոլչյանը, Արփի Մալաքյանը, Ժորա Թոփլաղալեցյանը, Դավիթ Պետրոսյան եւ Արամ Ղազազյանը, Լճաշենի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտ Սաթի Մարգարյանը, Գավառի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի աշակերտ Լյուսի Խաչատրյանը, Դրախտիկի միջնակարգ դպրոցի աշակերտ Դավիթ Ավալյանը: Երկրորդ տարիքային խմբում ընդգրկվել են Գավառի Ա. Իսահակյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցի աշակերտներ Մանե Յոլչյանը, Մարի Բոյախչյանը եւ Մանե Ղարաբաղցյանը, Լճաշենի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտ Մարիամ Հարությունյանը, Գավառի թիվ 5 հիմնական դպրոցի աշակերտ Դավիթ Թոռչյանը, Գավառի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի աշակերտ Սամվել Մելքոնյանը, Շողակաթի միջնակարգ դպրոցի աշակերտներ Անդրանիկ Սարգսյանը եւ Գուրգեն Կիրակոսյանը:

Մրցանակային տեղեր գրաված լողորդները պարգեւատրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության հավաստագրերով:

Մարզի հավաքական թիմերը նոյեմբերի 20-21-ին կմասնակցեն Ծաղկաձոր քաղաքում անցկացվող մրցաշարի եզրափակիչ փուլի մրցումներին:

Գեղամ Չարվադարյան

ԾՈՎԱՍԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է 4 ՓՈՂՈՑ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են 5, 7, 8, 17-րդ փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ծովասարի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 190 միլիոն 431 հազար դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է 5,7, 8, 17-րդ փողոցների ասֆալտապատում՝ 12677 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, ջրահեռացման առուների կառուցմամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի հոկտեմբերի սկզբներից ու նույն ամսի 19-ի դրությամբ արդեն իրականացվել շուրջ 45 տոկոսով:

Հիմնանորոգման աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի ընթացքում:

Շինարարությունն իրականացնում է «ՎՄՎ ՔԱՄՓԻ» ՍՊԸ-ն:

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է «ԿԱՐՏՈՖԵՍՏ» ՓԱՌԱՏՈՆԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գեղարքունիք գյուղում անցկացվել է «Կարտոֆեստ» փառատոնը:

Կարտոֆիլի բերքահավաքին նվիրված ավանդական փառատոնն ուղեկցվել է համայնքի տնտեսվարողների եւ գյուղատնտեսների արտադրանքի ցուցադրությունվաճառքով, համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների կողմից կարտոֆիլից պատրաստված կերակրատեսակների եւ բազմաբնույթ այլ պարագաների ցուցադրությամբ ու հյուրասիրությամբ, փռի կարտոֆիլի պատրաստմամբ ու հյուրասիրությամբ, ազգային երգ ու պարով:

Փառատոնին մասնակցել են Գեղարքունիքի մարզպետ Սարգսյանը, Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, համայնքի բնակիչներ, հյուրեր եւ զբոսաշրջիկներ:

Փառատոնն անցկացվել է Գավառի համայնքապետարանի ֆինանսավորմամբ եւ «Սարվոր» զբոսաշրջային, սոցիալ-կրթական, բնապահպանական հասարակական կազմակերպության աջակցությամբ:

Գեղարքունիքցի ակտիվ երիտասարդ Մկրտիչ Հակոբյանի առաջարկով եւ նախաձեռնությամբ «Կարտոֆեսթն» այս տարի անցկացվել է Գեղարքունիքում՝ նպաստելով բնակավայրի ճանաչելիության բարձրացմանը, տեղական արտադրանքի հանրահռչակմանը եւ բնակավայրի կյանքի աշխուժացմանը:

Ալվարդ Մանուկյան

ՍԵՎԱՆՈՒՄ ԱՂԲԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՎԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ ԵՐԿՐՈՐԴ ԿՅԱՆՔ

Սեւան քաղաքում 2025 թվականի հուլիսի 26-ից ներդրվել է թափոնների տեսակավորման նոր համակարգ, որի արդյունքում աղբի տեսակավորված թափոնները ստանում են երկրորդ կյանք:

Մեկ տարուց ավելի Սեւան քաղաքի առանձնատներում, հասարակական նշանակության շենք-շինություններում հարակից տարածքներում, բազմաբնակարան շենքերի բակային հատվածներում եւ փողոցներում թափոնամանները տարբերվում են իրենց գույնով եւ նշանակությամբ, իսկ սեւանցիները քայլ առ քայլ դառնում են նոր մշակույթի կրողներ:

Վերջին ամիսներին իրականացված ուսումնասիրությունների, հանդիպումների արդյունքում Վարսեր բնակավայրի բնակիչներին տրամադրվում են տեսակավորման թափոնամաններ: Ծրագրում շուտով կընդգրկվեն համայնքի մյուս բնակավայրերը:

Թափոնամանները տրամադրելիս բնակիչների հետ կքննվում են պայմանագրեր, ինչպես նաեւ տեղում իրականացվում է իրազեկում:

Տեսակավորված աղբը սանիտարական աղբավայր է տեղափոխվում «Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի միջոցով, որին համայնքը արտապատվիրակել է տեսակավորված աղբի հավաքման եւ տեղափոխման ողջ գործընթացը: ՍՊԸ-ի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի օգոստոսի 1-ից դեկտեմբերի 31-ը սանիտարական աղբավայր է տեղափոխվել 400 կգ ապակի, 10360կգ ստվարաթուղթ եւ թուղթ, 600 կգ մետաղ, 50 կգ պոլիէթիլենային տոպրակ, 1800 կգ պլաստիկ:

2026 թվականի հունվարի 1-ից սեպտեմբերի 19-ը Սեւան քաղաքից տեղափոխված տեսակավորված թափոնների պատկերն այսպիսին է՝ ստվարաթուղթ՝ 43513.5 կգ, ապակյա տարա՝ 2530 կգ, պլաստմասե շիշ՝ 3192.5 կգ, խցան՝ 269.5 կգ, պլաստմաս՝1286 կգ, պլաստմասե արկղ՝ 703 կգ, ցելոֆան՝ 1016 կգ, սեւ մետաղ՝ 565.5 կգ, թիթեղյա բանկա՝ 123.5 կգ:

Սեւանում աղբի տեսակավորման համակարգը ներդրվել է Շվեդիայի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Հայաստանի Ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության եւ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ:

Արմինե Ղուկասյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ Նախարարության «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի Լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1569-Ն որոշմամբ հաստատված՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 4-րդ կետի համաձայն:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ–ում (ք. Գավառ, Ազատության 38)՝ 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մինչև նոյեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00 -ից մինչև ժամը16.00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026 թ. նոյեմբերի 17-ին՝ ժամը 1300 -ին, «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ում /ք. Գավառ, Ազատության 38/:

Հեռ՝ (+264) 23402

Էլ. հասցե՝ gavarstateagriculturalcollege@gmail.com

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Կայք էջ՝ https://geghama.am/
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 20. 10. 2026 թ.:
Տպագրվում է «Հայկարլի» ՓԲԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: